Սբ. Ծննդյան Քարոզ, 2022

Սիրելի քույրեր եւ եղբայրներ,

Այսօր Սբ. Ծնունդ է, հայոց շարականագրի բառերով՝ *«Խորհուրդ մեծ եւ սքանչելի»*: Սբ. Պատարագի ընթացքին քիչ առաջ ընթերցված Սբ. Գրային ավետարանական հատվածը կրկին մեզ է ներկայացնում Հիսուս Քրիստոսի Սբ. Ծննդյան հրաշագեղ պատմությունը: Հնչում են մեզ հոգեհարազատ հոգեզմայլ երգեր ու շարականներ՝ երկնած մեր Եկեղեցու նշանավոր սուրբ հայրերի կողմից: Երկնքից հրեշտակներն երգաձայն ավետում են. *«Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հաճութիւն»*: Ջերմանում է մեր սիրտը, լցվում տաքուկ ու ջերմ մի զգացումով: Օդի մեջ ինչ-որ խորհրդավոր բան կա:

Ի՞նչ ենք նշում կամ տոնախմբում մենք այսօր. մի մանկան ծնունդ: Մի մանուկ սակայն, որ Որդին է Աստուծո, Փրկիչը մարդկության, Իշխանը խաղաղության: Մի մանուկ, որ մեզ թույլ է տվել եւ թույլ է տալիս ասել ու հավատալ, որ *«Աստված ընդ մեզ է»*: Մենք նշում ենք Հիսուս Քրիստոս Աստծո Որդու ծնունդը, որ միաժամանակ Մարդու Որդին է՝ ծնված Մարիամից: Մարդու նկատմամբ Աստծո բացարձակ սիրո վկայությունն է այսօր ծնվող երեխան: Մարիամն աշխարհ է բերում այս երեխային, որովհետեւ Աստված սիրում է մեզ: Մանուկ Հիսուսի մեջ ու հետ Աստված ինքն է աշխարհ գալիս իր ողջ սիրով: Մարդեղանում է Աստված, ծնվում է որպես մի մանուկ: Հիսուս իր մեջ միավորում է երկինքն ու երկիրը: Այս է այն մեծ ու սքանչելի խորհուրդը, որ մենք նշում ենք ամեն տարի:

Հիսուսի ծննդյան ժամանակ նրան երգեցին ու փառաբանեցին երկնքի հրեշտակները, նրան խոնարհվելու եկան մարդկանց տարբեր խմբեր՝ դաշտերի հովիվներն ու իմաստուն թագավորները: Այժմ մենք ենք կանգնած խորհրդավոր մսուրի առջեւ: Այսօր էլ մեզ է տրվում առիթն ու հնարավորությունը՝ խոնարհվելու մանկացյալ Փրկչի առջեւ եւ փառաբանելու նրան: Փառաբանելու ոչ միայն բերանի խոսքով, այլ հոգով եւ ճշմարտությամբ, ճշմարիտ հավատքով ու բարի գործով, մեր կյանքի օրինակով: Եւ այս ձեւով աստվածային խորհուրդը կիմաստավորվի մարդկային կյանքում ու Աստծո նպատակը կդառնա իրականություն՝ մեր անհատական, ընտանեկան, համայնքային, հանրային կյանքում: Այսպես մենք թույլ կտանք, որ Աստծո սերը սփռվի ամենուր եւ Աստծո կամքը թագավորի երկրի վրա. *«Եղիցին կամք քո»*: Միայն այսպես Հիսուսի ծնունդը կդառնա Սուրբ Ծնունդ բոլորիս համար:

Աստծուն մենք շատ հաճախ փնտրում ենք հեռուներում, անհասանելի երկինքներում, մինչդեռ իրականում Աստված մեզ հետ է այսօր ծնվող իր Միածին Որդիով՝ Հիսուս Քրիստոսով, որին հեռու տեղ փնտրելու կարիք չկա: Նա մեզ հետ է, մեր կողքին է, մեր մեջ է: Նրան այսօր եւ ամենայն օր պետք է փնտրել ու գտնել նաեւ մեր դիմացինի մեջ, մեզ շրջապատող մարդկանց մեջ:

Քրիստոնեական եկեղեցին Սբ. Ծնունդով չի նշում մի ինչ-որ իրադարձություն, որ տեղի է ունեցել ավելի քան 2000 տարիներ առաջ, որի մասին մեզ վկայել են մի քանի անձեր, հովիվներ կամ իմաստուններ: Սուրբ Ծնունդը մի գեղեցիկ հեքիաթ չէ, որ շուրջ 2020 տարի պատմվում է աշխարհին նորից ու կրկին: Մենք հավատում ենք հավիտենական Քրիստոս Հիսուսին, որ *«երեկ եւ այսօր, նոյն եւ յաւիտեան»*: Յիսուս չծնվեց միայն կամ ապրեց 33 տարիներ եւ ապա անհայտացավ, եւ մնաց նրա մասին միայն հիշողությունը: Նա կենդանի եւ հավերժական ներկայություն է նաեւ այսօր: Նա Տերն ու Փրկիչն է նաեւ այսօրվա մարդու:

Քրիստոնեական հավատքը խարսխված է կենդանի Աստծո հավատքի վրա, որ մեզ է ներկայացել եւ այսօր էլ մեզ է ներկայանում Հիսուս Քրիստոսով, Նրա հետ ու Նրա միջոցով: Այս է քրիստոնեական հավատքը: Եւ այս հավատքը պետք է ունենալ, վառ պահել, չկորցնել, փոխանցել: Իսկ այդ հավատքը կենդանի պահելու, այն միմյանց հետ ապրելու եւ հաջորդներին փոխանցելու լավագույն վայրն ու միջոցը մեզ՝ հայերիս համար Հայաստանյայց Եկեղեցին է, մեր հայրենի հողում վեր խոյացող աստվածադրոշմ ու հավերժախոս Սբ. Էջմիածնից սկսած մինչեւ աշխարհի չորս ծագերը, *«ծննդավայրը մեր հոգու»*, որ Հիսուս Քրիստոսով *«դեպի երկինք բարձրացող գաղտնի ճամփայ մը ունի»*:

Այսօր էլ Հիսուս Քրիստոս կյանքի բոլոր մարտահրավերների առջեւ մեզ տալիս է հույս եւ վստահություն, ինչը մեզ օդ ու ջրի պես անհրաժեշտ է մանավանդ համավարակի այս դժվար ու անորոշ ժամանակներում, ի դիմաց մեր նվիրական հայրենիքի Հայաստանի եւ նաեւ Արցախի շուրջ ձեւավորվող աշխարհաքաղաքական մտահոգիչ զարգացումների, ի տես ընդհանուր աշխարհի փխրուն խաղաղության: Բացենք մեր սրտերը Աստվածորդու առջեւ եւ թույլ տանք, որ Նա գործի մեր մեջ ու մեզնից յուրաքանչյուրի միջոցով, որպեսզի մեր անհատական ու հավաքական հույսերն էլ իրականություն դառնան: Թող Սուրբ Ծնունդը տոն լինի բոլորիս համար՝ մեր անձնական կյանքում, մեր ընտանիքներում, մեր համայնքում, մեր երկրում, որովհետեւ Հիսուս ծնվեց մեզ համար՝ երեկ եւ այսօր:

Տիրոջ օրհնութեան հայցմամբ շնորհավորում եմ Գերմանահայ մեր համայնքի բոլոր հաստատությունների, թեմական ու համայնքային մարմինների, հոգեւորականաց դասի, հավատավոր մեր ողջ ժողովրդի 2022 Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին եւ ողջ հոգեւորականաց դասին ձայնակցելով աղոթում եմ մեր սիրելի հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության բարգավաճման եւ մեր սահմանների խաղաղության համար: Աղոթում եմ Արցախի մեր քույրերի եւ եղբայրների արդար իրավունքների իրականացման համար: Աղոթում եմ Հայաստանյայց Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի անսասանության համար, մեր Թեմի եւ իր հովանու ներքո գործող համայնքների առաքելության հաջողության համար: Աստված պահապան բոլորիս:

Շնորհավոր Նոր Տարի: Շնորհավոր Սուրբ Ծնունդ:
«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ: Զեզ եւ մեզ մեծ ավետիս»: Ամեն:

Սերովբէ Եպիսկոպոս Իսախանեան
Առաջնորդ Հայոց Գերմանիոյ
6 Յունուար 2022

Weihnachtspredigt, 2022

Liebe Schwestern und Brüder,

heute ist Weihnachten, das Geburtsfest unseres Herrn Jesus Christus, mit den Worten des armenischen Weihnachtshymnus *„ein großes und wunderbares Mysterium“*. Die während der heutigen Hl. Weihnachtsliturgie vorgelesene Lesung aus dem Neuen Testament erzählt uns erneut die wundervolle Geschichte der Hl. Geburt Jesu Christi. Es ertönen viele uns bekannte Gesänge und Hymnen – seelenrührende Werke der ruhmreichen heiligen Väter unserer Kirche. Die Engel vom Himmel verkünden fröhlich: *„Ehre sei Gott in der Höhe und Friede auf Erden, den Menschen seines Wohlgefallens“.* Es wärmt unser Herz, erfüllt uns mit einem warmen und angenehmen Gefühl. Es liegt etwas Geheimnisvolles in der Luft.

Was feiern wir heute? – die Geburt eines Kindes. Aber ein Kind, das der Sohn Gottes ist, der Retter der Menschheit, der Fürst des Friedens. Ein Kind, das uns glauben und bekennen lässt, dass *„Gott mit uns ist“*. Wir feiern die Geburt von Jesus Christus, dem Sohn Gottes, der auch der Menschensohn ist, geboren von Maria. Das Kind, das heute geboren wird, ist der Beweis für Gottes unendliche Liebe zu uns Menschen. Maria bringt dieses Kind zur Welt, weil Gott uns liebt. Die Liebe Gottes ist der wahre Grund für die Geburt Jesu. Im Jesuskind und mit ihm kommt Gott mit all seiner Liebe zur Welt. Gott wird Mensch und wird als Kind geboren. Jesus vereint in sich Himmel und Erde. Dies ist das große und wunderbare Mysterium von Weihnachten, das wir jedes Jahr feiern.

Bei der Geburt Jesu sangen und lobpriesen ihn die Engel im Himmel, und Hirten und Weise kamen, um ihn anzubeten. Jetzt stehen wir vor einer weihnachtlichen Krippe. Heute wird uns die Gelegenheit gegeben, uns vor dem Mensch gewordenen Erlöser zu verneigen und ihn zu verherrlichen – nicht nur mit unserem Mund, sondern auch mit unseren Herzen und wahrhaftig, mit aufrichtigem Glauben und guten Werken, durch unsere fromme Lebensweise. Auf diese Weise wird der göttliche Rat im menschlichen Leben verwirklicht und Gottes Vorsatz in unserem individuellen, familiären, gemeinschaftlichen und öffentlichen Leben bewahrheiten. Auf diese Weise werden wir zulassen, dass sich die Liebe Gottes überall ausbreitet und der Wille Gottes auf Erden herrscht – *„Dein Wille geschehe…“*. Nur so wird die Geburt Jesu für uns alle zu einem Weihnachtsfest.

Wir suchen Gott oft in der Ferne, in unzugänglichen Himmeln, obwohl Gott bei uns ist durch seinen eingeborenen Sohn Jesus Christus. Ihn brauchen wir nicht in der Ferne zu suchen. Er ist mit uns, neben uns, in uns, unter uns. Ihn sollen wir heute und immer auch in unserem Nächsten, in den Menschen um uns herum suchen und finden.

Die christliche Kirche feiert die Geburt des Herrn nicht wie ein Ereignis, das sich vor mehr als 2.000 Jahren geschah und sich vor einigen wenigen Menschen ereignete. Weihnachtsgeschichte ist kein schönes Märchen, das der Welt seit mehr als 2020 Jahren immer wieder erzählt wird. Wir glauben an den ewigen Christus Jesus, der *„gestern und heute und in Ewigkeit ist“.* Jesus ist nicht geboren, um 33 Jahre zu leben und zu verschwinden. Und an ihn ist nicht nur eine bloße Erinnerung geblieben. Er ist auch heute eine bleibende und ewige Gegenwart. Er ist auch Herr und Retter des heutigen Menschen. Der christliche Glaube wurzelt im Glauben des lebendigen Gottes, der uns durch Jesus Christus, mit ihm und durch ihn vergegenwärtigt wurde und wird. Das ist der christliche Glaube. Und diesen Glauben soll man haben, am Leben erhalten, nicht verlieren, weitergeben. Und der beste Ort und Weg, diesen Glauben lebendig zu halten, miteinander zu leben und an die nächste Generation weiterzugeben, ist für uns Armenier die Armenische Kirche, angefangen vom St. Etschmiadzin, dem nie verstummenden Siegel Gottes auf dem Boden unseres Heimatlandes, bis in alle Ecken der Welt, *„dem Geburtsort der armenischen Seele“*, der durch Jesus Christus *„einen geheimen Weg zum Himmel hat“.*

Angesichts aller gegenwärtigen Herausforderungen des Lebens schenkt uns Gott in Jesus Christus auch heute Hoffnung und Zuversicht, die wir wie Luft und Wasser brauchen, insbesondere in diesen schwierigen und unsicheren Zeiten der Corona-Pandemie, in Hinblick auf die besorgniserregenden geopolitischen Entwicklungen um unser Heimatland Armenien und Arzach, angesichts des zerbrechlichen Friedens auf der ganzen Welt. Öffnen wir zum Sohn Gottes unsere Herzen hin und lassen ihn zu, in uns und durch jeden von uns zu wirken, damit unsere individuellen und gemeinschaftlichen Hoffnungen wahr werden und in Erfüllung gehen. In diesem Sinne soll Weihnachten ein besinnliches Fest für uns alle sein, in unserem Privatleben, in unseren Familien, in unserer Gemeinschaft, in unserem Land, denn Jesus ist gestern und heute für uns geboren.

Den Segen des neugeborenen Heilandes ersuchend wünsche ich allen Institutionen und Einrichtungen unserer deutsch-armenischen Gemeinschaft, den Diözesan- und

Gemeindegremien, dem Klerus, den Mitgliedern unserer Gemeinschaft alles erdenklich Gute zum neuen Jahr 2022 und zum Weihnachtsfest.

Zusammen mit Seiner Heiligkeit Karekin II., dem Obersten Patriarchen und Katholikos Aller Armenier, und der gesamten armenischen Geistlichkeit bete ich für den Wohlstand unserer geliebten Heimat, der Republik Armenien, und für den Frieden auf der ganzen Welt und insbesondere an unseren Grenzen. Ich bete für die Verwirklichung der gerechten Rechte und Erwartungen unserer Schwestern und Brüder in Arzach. Ich bete für die Armenische Kirche und die Standhaftigkeit vom Muttersitz St. Etschmiadzin, für den erfolgreichen Dienst unserer Diözese und Gemeinden. Gott beschütze uns alle.

Frohes neues Jahr und gesegnete Weihnachten!
„Christus ist geboren und erschienen“.
„Eine große frohe Botschaft euch und uns“. Amen!

Bischof Serovpé Isakhanyan
Primas der Diözese
6. Januar 2022